ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.05.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/117

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.05.2021թ. թիվ 26/26-1/6919-2021 գրությամբ Իշխան Մանուկյան Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 28.04.2021թ. թիվ 09/634 գրության հիման վրա 05.05.2021թ. թիվ 26/26-1/6919-2021 գրությամբ նախաձեռնել է Իշխան Մանուկյան Ա/Ձ-ին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Իշխան Մանուկյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Իշխան Մանուկյան Ա/Ձ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Իշխան Մանուկյան Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/117 ընթացակարգի շրջանակներում 10.05.2021թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 28.04.2021թ. թիվ 09/634 գրությամբ հայտնել է հետևյալը.

«2022 թվականի փետրվարի 22-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և Ա/Ձ Իշխան Մանուկյանի միջև կնքվել է տնտեսական և սանիհգենիկ ապրանքների գնման թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/11-1-ԵՊԲՀ-3» պայմանագիրը: Պայմանագրի համաձայն՝ Ա/Ձ-ն պարտավորվել է 30 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել պայմանագրով նախատեսված թվով յոթ տեսակի ապրանքները:

Սույն թվականի ապրիլի 1-ին Ա/Ձ Իշխան Մանուկյանի կողմից ստացվել է գրություն, որով Ա/Ձ-ն հրաժարվում է մատակարարել պայմանագրի 27-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքը՝ կահույք մաքրելու կտորը:

Հիմք ընդունելով «ԳՀԱՊՁԲ-2021/11-1-ԵՊԲՀ-3» ծածկագրով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) պարբերությունը՝ Համալսարանը լուծել է վերջինիս հետ կնքված վերոհիշյալ պայմանագիրը 27-րդ չափաբաժնի մասով:

Հիմք ընդունելով 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը հրապարակել է տեղեկագրում և ուղարկել է նաև Ա/Ձ-ի պաշտոնական էլեկտրոնային փոստին:

Քանի որ թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/11-1-ԵՊԲՀ-3» պայմանագիրը լուծվել է պայմանագրով նախատեսված պարտավորությունների խախտման հիմքով, գնումների օրենսդրության պահանջներին համապատասխան Ձեզ ենք տրամադրում տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար անհրաժեշտ հիմքերը՝ թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/11-1-ԵՊԲՀ-3» պայմանագիրը լուծելու մասին Համալսարանի ծանուցումը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/117 ընթացակարգի շրջանակներում 10.05.2021թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/117 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/117 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և Ա/Ձ Իշխան Մանուկյանի միջև 22.02.2021թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/11-1-ԵՊԲՀ-3» ծածկագրով տնտեսական և սանիհգենիկ ապրանքների գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի համաձայն՝ Պատվիրատուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից N 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագրի կնքման օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում:

3. Ա/Ձ Իշխան Մանուկյանը 01.04.2021թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Սույն թվականի փետրվարի 22-ին Ա/Ձ Իշխան Մանուկյանի և «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի միջև կնքված «ԳՀԱՊՁԲ-2021/11-1-ԵՊԲՀ-3» պայմանագրով Ա/Ձ Իշխան Մանուկյանը պարտավորվում

է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին մատակարարել թվով 7 չափաբաժիններով ապրանքներ, սակայն 27-րդ չափաբաժնով նախատեսված կահույք մաքրող կտորը Ա/Ձ Իշխան Մանուկյանը հրաժարվում է մատակարարել, քանի որ պայմանագրով ամրագրված 90 դրամը շուկայում առկա տվյալ ապրանքի գնից 3 անգամ էժան է և մատակարարման պարագայում առաջացող ֆինանսական վնասը մեծ է լինելու: Ա/Ձ Իշխան Մանուկյանը գիտակցում է, որ իր կողմից է տեղի ունեցել գնային նման անհամապատասխանություն և պատրաստ է կրել պատասխանատվություն համաձայն երկու կողմերի միջև կնքված տուժանքի մասին համաձայնագրերի (որակավորման ապահովում և պայմանագրի ապահովում):

4. Պատվիրատուն 23.04.2021թ. Ա/Ձ Իշխան Մանուկյանին ուղղված թիվ 09/609 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն 2021 թվականի փետրվարի 22-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և Ա/Ձ Իշխան Մանուկյանի միջև կնքված տնտեսական և սանիհգենիկ ապրանքների գնման թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/11-1-ԵՊԲՀ-3» պայմանագրի՝ Ա/Ձ-ն պարտավորվել է 30 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքները: Սակայն 01.04.2021թ. Համալսարան մուտք արված գրությամբ Ա/Ձ-ն տեղեկացրել է, որ հրաժարվում է պայմանագրի թիվ 27 չափաբաժնի մատակարարումից՝ պայմանագրային գնի շուկայական գնից էականորեն ցածր լինելու պատճառաբանմամբ:

Վերոգրյալով պայմանավորված և առաջնորդվելով «ԳՀԱՊՁԲ-2021/11-1-ԵՊԲՀ-3» ծածկագրով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) պարբերությամբ՝ Համալսարանը միակողմանի լուծում է 22.02.2021թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/11-1-ԵՊԲՀ-3» պայմանագիրը չմատակարարված ապրանքի մասով՝ կահույք մաքրելու կտոր:

Հիմք ընդունելով 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 23.04.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 05.05.2021թ. թիվ 26/26-1/6919-2021 գրությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 28.04.2021թ. թիվ 09/634 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և Ա/Ձ Իշխան Մանուկյանի միջև 22.02.2021թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/11-1-ԵՊԲՀ-3» ծածկագրով տնտեսական և սանհիգենիկ ապրանքների գնման պայմանագիր, որի 1-ին կետի համաձայն՝ Պատվիրատուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից N 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագրի կնքման օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում:

Ա/Ձ Իշխան Մանուկյանը 01.04.2021թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Սույն թվականի փետրվարի 22-ին Ա/Ձ Իշխան Մանուկյանի և «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի միջև կնքված ԳՀԱՊՁԲ-2021/11-1-ԵՊԲՀ-3» պայմանագրով Ա/Ձ Իշխան Մանուկյանը պարտավորվում է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին մատակարարել թվով 7 չափաբաժիններով ապրանքներ, սակայն 27-րդ չափաբաժնով նախատեսված կահույք մաքրող կտորը Ա/Ձ Իշխան Մանուկյանը հրաժարվում է մատակարարել, քանի որ պայմանագրով ամրագրված 90 դրամը շուկայում առկա տվյալ ապրանքի գնից 3 անգամ էժան է և մատակարարման

պարագայում առաջացող ֆինանսական վնասը մեծ է լինելու: Ա/Ձ Իշխան Մանուկյանը գիտակցում է, որ իր կողմից է տեղի ունեցել գնային նման անհամապատասխանությունը և պատրաստ է կրել պատասխանատվություն համաձայն երկու կողմերի միջև կնքված տուժանքի մասին համաձայնագրերի (որակավորման ապահովում և պայմանագրի ապահովում):

Պատվիրատուն 23.04.2021թ. Ա/Ձ Իշխան Մանուկյանին ուղղված թիվ 09/609 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն 2021 թվականի փետրվարի 22-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և Ա/Ձ Իշխան Մանուկյանի միջև կնքված տնտեսական և սանիհիգենիկ ապրանքների գնման թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/11-1-ԵՊԲՀ-3» պայմանագրի՝ Ա/Ձ-ն պարտավորվել է 30 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքները: Սակայն 01.04.2021թ. Համալսարան մուտք արված գրությամբ Ա/Ձ-ն տեղեկացրել է, որ հրաժարվում է պայմանագրի թիվ 27 չափաբաժնի մատակարարումից՝ պայմանագրային գնի շուկայական գնից էականորեն ցածր լինելու պատճառաբանմամբ:

Վերոգրյալով պայմանավորված և առաջնորդվելով «ԳՀԱՊՁԲ-2021/11-1-ԵՊԲՀ-3» ծածկագրով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) պարբերությամբ՝ Համալսարանը միակողմանի լուծում է 22.02.2021թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/11-1-ԵՊԲՀ-3» պայմանագիրը չմատակարարված ապրանքի մասով՝ կահույք մաքրելու կտոր:

Հիմք ընդունելով 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 23.04.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա)մատակարարվել է անպատշաչ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Գործով առկա նյութերի ուսումնասիրության արդյունքում արձանագրում եմ, որ 01.04.2021թ. Ա/Ձ Իշխան Մանուկյանը Պատվիրատուին ուղղված գրությամբ տեղեկացրել է, որ հրաժարվում է պայմանագրի թիվ 27-րդ չափաբաժնի մատակարարումից՝ պայմանագրային գնի՝ շուկայական գնից էականորեն ցածր լինելու պատճառաբանմամբ, իսկ Պատվիրատուն, հիմք ընդունելով վերջինիս գրությունը և առաջնորդվելով «ԳՀԱՊՁԲ-2021/11-1-ԵՊԲՀ-3» ծածկագրով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) պարբերությամբ, 23.04.2021թ. միակողմանի լուծել է 22.02.2021թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/11-1-ԵՊԲՀ-3» պայմանագիրը՝ չմատակարարված ապրանքի՝ կահույք մաքրելու կտորի, մասով:

Այսպիսով՝ գտնում եմ, որ Ա/Ձ Իշխան Մանուկյանը խախտել է իր և «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի միջև 22.02.2021թ. կնքված Պայմանագրով նախատեսված 27-րդ չափաբաժնի մասով ապրանքի մատակարարման ժամկետը, ինչի արդյունքում Ա/Ձ Իշխան Մանուկյանը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագիրը չմատակարարված ապրանքի մասով միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ա/Ձ Իշխան Մանուկյանը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.05.2021թ. թիվ 26/26-1/6919-2021 գրությամբ Ա/Ձ Իշխան Մանուկյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Իշխան Մանուկյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**